

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

ԳՈՐԻՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սյունյաց լեռնապարի լանջերից ստորոտ ձգվող, կանաչազարդ մի գողտրիկ անկյունում, տարածվում է Հայաստանի հարավային դարպասներից մեկը՝ Գորիս քաղաքը: Դարերի պատմություն ունի Գորիսը: Անցյալում այն սահմանային գոտի չէիր համարի, սակայն դառը ճակատագրի բերումով Հայաստանը ամփոփվեց ներկայիս փոքրիկ հողակտորի վրա, և քաղաքը այսօր հարևան հանրապետությունից գտնվում է ընդամենը երկու տասնյակ կիլոմետր հեռավորության վրա: Գրեթե նույնքան ճանապարհահատված էլ Գորիսը բաժանում է Հայոց Արցախից՝ Լեռնային Ղարաբաղից:

Հնուց անտի Գորիսը հայտնի է իր շինարարներով, և այսօր քաղաքն առանձնանում է իր ուրույն, յուրահատուկ, բաց և զուտ հայկական ճարտարապետությամբ, իր սյունազարդ ու քանդակազարդ բազալտակուռ տներով: Քաղաքի կենտրոնում վեր է խոյանում Գորիսի միակ կանգուն եկեղեցին, որ կրում է հայոց հավատքի մեծ լուսավորիչ Ս. Գրիգորի անունը: Եկեղեցին կառուցվել է դարասկզբին, Խրիմյան Հայրիկ Կաթողիկոսի օրոք: Կառուցվել է Հայաստանի համար շատ ծանր մի ժամանակաշրջանում, և թերևս այս է եղել պատճառը, որ նրա շինարարությունը չի ավարտվել: Եկեղեցին չունի գմբեթ: Սակայն պետք է նշել, որ այս վիճակում էլ եկեղեցին աչքի է ընկնում իր յուրահատուկ ճարտարապետա-կառուցողական հորինվածքով, և իբրև այդպիսին շատ համահունչ է քաղաքի ընդհանուր Հարտարապետությանը:

Թեև կիսակառույց, այնուհանդերձ եկեղեցին գործել է, գործել է մինչև 1922 թ. հունվարի 6-ի Ծննդյան սուրբ պատարագը, երբ վերևից եկած հրամանով փակվել են նրա դռները, իսկ հոգևորականները կա՛մ աքսորվել են, կա՛մ հեռացել Էջմիածին: Լավ է, որ եկեղեցին չի արժանացել բազմաթիվ այլ եկեղեցիների բախտին՝ չի քանդվել, այլ մնացել է կանգուն և անվնաս: Ականատեսները վկայում են, որ այս եկեղեցում է սպարապետ օծվել Լեռնահայաստանի ազատաբաղձ ու ազատարար որդին՝ Գարեգին Նժդեհը:

Հուրախություն Գորիս քաղաքի բազմահազար բնակչության, ընդառաջելով նրանց իսկ բազմաթիվ դիմումներին, Գորիսի քաղխորհրդի որոշմամբ և Հայաստանի կառավարության հաստատումով 1989 թ. նոյեմբերին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին վերստին հանձնվեց տեղի համայնքին ի գործածություն: Եկեղեցու վերաբացումը տեղի ունեցավ 1989 թ. դեկտեմբերի 7-ին, հայոց մեծ երկրաշարժի բազմահազար զոհերի տարելիցի օրը:

Նախապես շրջանային «Զանգեզուր» թերթը հրապարակել էր Սյունյաց թեմի Դիվանի հայտարարությունը, ըստ որի դեկտեմբերի 7-ին, ժամը 11-ին, Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցու վերաբացման կապակցությամբ և ի հիշատակ երկրաշարժի զոհերի, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի կողմից մատուցվելու է սուրբ և անմահ պատարագ:

Վաղ առավոտից բազում գորիսցիներ են շտապում եկեղեցի՝ մասնակցելու սրբազան արարողությանը, ունկնդրելու հոգեվոր երաժշտություն, վերստին աղոթելու տաճարի կամարների ներքո: Քիչ չէ թիվը նրանց, ովքեր դեռևս հիշում էին 1922 թ. հունվարի 6-ի Ծննդյան պատարագը, երբ վերջին անգամ հայ հոգևորականը իր պատգամն էր տվել ժողովրդին: Նրանց հուշերի մեջ դժվար չէր նկատել ուրախության ու հոգեկան գոհունակության արտահայտություններ:

Սկսվում է սուրբ պատարագը: Կրկին եկեղեցու կամարների տակ հայ հոգևոր երգն է հնչում, կրկին գորիսեցու շուրթերով հայ աղոթքն է երկինք առաքվում: Յոթսնասուն տարիները շատ բան են խլել, շատ բան մոռացության մատնել: Տարեց կանայք ու տղամարդիկ կարծես ինչ-որ բան հիշում են, դեռ չեն մոռացել: «Հայր մեր որ յերկինս ես...» մրմնջում է մի ծեր կին: Հետո կպարզվի, որ այդ կինը մկոտվել է այս եկեղեցում: Նրա հայրը, որին հետո Սիբիր քշեցին, ծառայել է եկեղեցում: Երիտասարդների աչքերի մեջ զարմանք, բայց և հետաքրքրություն է նկատվում: Գրեթե ամեն ինչ դեռ անհասկանալի է, լեզուն անըմբռնելի: Հույսանք ու հավատանք, որ շուտով գորիսեցին, ծեր թե երիտասարդ, եկեղեցի կգա աղոթելու, վերստին հաղորդվելու նախնաց հավատքին՝ քրիստոնեական հավատքին, մանավանդ շատ-շատերը իրենց տներում Նոր Կտակարան ու Աստվածաշունչ ունեն, ուստի աղոթագրքեր:

Պատարագի երգեցողությունը կատարում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Ընտանեական երգչախումբը՝ Վաղերիկ Գասպարյանի ղեկավարությամբ: Ան կազմված է ուսանողներեն վերջերս, Գորիսի մանկավարժական ուսումնարանի բարձր կուրսերի ուսանողուհիներից:

Պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»: Պատարագիչ սրբազանը հուզված է: Վաթսունյոթ տարիների ընդմիջումից հետո նրան է բախտ վիճակվել ասուսին անգամ իր սրտի խոսքը հղելու ժողովրդին, իր պատգամը տալու նրանց:

Ժողովուրդը ունկնդիր է սրբազանի խոսքին:

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ամէն»:

«Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս, ի տուն Տեառն երթիցուք մեք» (Սղմ. ՃԻԱ 1):

(Ես ուրախացա, երբ ինձ ասացին Տիրոջ տունը գնանք մենք):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, որ եք ի Գորիս, Սաղմոսերգու Դավթի քաղցրաձոր այս խոսքերով ողջունում եմ բոլորիդ Ս. Գրիգոր Լուսավորիչ այս գեղեցկահյուս տաճարից ներս և աղոթում առ Բարձրյալն Աստված, որ իր նախախնամող Աջը, որպես պահապան ու հուսատուր, տարածեց լեռնապարերով շրջապատված ձեր գեղեցիկ քաղաքի վրա, բացեց ձեր հոգու աչքերը, և դուք ուրախացած, արձագանքելով մեր կոչին և զանգակների ղողանջին, ասացիք. «Ի տուն Տեառն երթիցուք մեք»: Բարի առաքեցաք, սիրելի հավատացյալներ, խաղաղություն ընդ ձեզ, որովհետև ձեր օգնությունը Տիրոջից է, իսկ նրա ողորմությունը նման է պահապան ամպհովանու:

Շուրջ յոթանասուն տարի փակ էին այս տաճարի դռները: Այդ ձիգ տարիների անտարբերությունը աղճատեց հավատացյալների կրոնական զգացումներն ու բարոյական ազատությունը: Գիտե՞ք, թե որքան ծանր է կրել բռնության ցավերը: Բայց ես լավ եմ ճանաչում ձեզ, քաջատեղյակ եմ ձեր անթեղված հավատքի հարությանն ու երկյուղածությանը: Ինքներդ մասնակից եղաք, երբ Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսը հայրապետական այցելություն տվեց Սյունյաց աշխարհ. հավատքի ի՞նչ խանդավառություն, հոգու ի՞նչ պոռթկում, երկյուղածության ի՞նչ խորին զգացում...

Այո, մոռացությունն ու անտարբերությունը անհավոր չարիքներ են մարդկային հասարակական կյանքում: Այսօր Սյունիքը ապրում է կրոնական վերածնունդ: Թող Աստված օգնի և զարգացնի այդ ընթացքը, մենք էլ կանենք այն ամենը, ինչ հնարավոր է մեր Եկեղեցուն: Այսօր դուք ստանում եք հոգևոր սնունդ, առանց որի անհնար է ապրել: Առանց այդ սնունդի մենք չենք կարող միանալ մեր հայրերին ու պապերին, էլ ուր մնաց Մխիթար Սպարապետին ու Վարդան Մամիկոնյանին, Մեսրոպ Մաշտոցին ու Գրիգոր Լուսավորչին: Իսկ հոգևոր հաղորդությունը նրանց բեռը այսօր առավել է անհրաժեշտ, քան ուրիշ որևէ ժամանակ: Շարունակենք ապրել, աղոթել և հավատալ այդ հոգևոր հա-

ղորդությամբ այժմ, վաղը և ընդմիշտ, ամեն»:

Պատարագը ավարտված է: Բազմահազար գորիսեցիներ Ասողիկ եպիսկոպոսի և Սերովբե վարդապետի գլխավորությամբ շարժվում են դեպի երկրաշարժի զոհերի հուշահամալիր, ուր խաչքարվել է վիշտը հայոց: Այստեղ հոգեհանգստյան պաշտոն է կատարվելու՝ ի հիշատակ բազմահազար զոհերի: Համալիրի խաչքարեղեն աղբյուրին թարմ ծաղիկներ են, ծաղկեպսակներ: Մեղմորեն, եկեղեցու զանգերի սգո դողանջներ հիշեցնող ռիթմով տարածվում է «Գթա Տէր»-ի հնչյունները. «Գթա Տէր ի հոգիս մեր ննջեցելոցն...»:

Հուշահամալիրի մոտ ես առաջնորդ սրբազանը իր խոսքն է հղում ժողովրդին, ոգեկոչում հիշատակը բազմահազար անմեղ զոհերի, հույսի ու արիության կոչ է ուղղում նրանց՝ պատգամելով. «Սիրելի սգակիր ժողովուրդ, այսօր մահասարսուռ երկրաշարժի տարելիցն է: Բնության տարերքը դեկտեմբերյան իր յոթներորդ օրվա սև խորհրդով ցնցեց Հայաստան աշխարհը, այն աշխարհը, որ նույն տարվա երկրորդ ամսից սկսյալ քաղցրորեն էր լցվել արդարությամբ և ճշմարտությամբ, հավատքով ու հույսով: Իր զավակների պրկված աչքերում գալիքն էր հառնում, որպեսզի այն դառնար կայուն ուրախություն և հարատև խաղաղություն: Այդ նույն աշխարհի զավակների այրված սրտերում բորբոքվում էր հայրենիքի կարոտն ու հայրենյաց սերը, և այդ զավակները զորացած միաբանության շնորհներով աշխարհի հանուր մարդկությանը ցույց տվեցին իրենց բարոյական ամենալավեհ առաքինությունները: Հանդուրժողականության ու համերաշխության ձայներով փորձեցին առաջ տանել իրենց գործը, որպեսզի ա՛ն արժանի դառնար ամենայն ընդունելության: Այդ նույն զավակները մղում էին գեղեցիկ պատերազմ. անարյուն, անզոհ, խղճով ու խոնարհությամբ, սիրով և սրբությամբ: Բայց ինչ եղավ՝ նորից կոտորած... ու Կարմիր լուրեր: Հայոց կոտորածների կարմիր գրքում արյունագրվեց մի նոր անուն՝ սումգայիթ, իսկ հետո. «...շարժումն մեծ, որպիսի չիք եղեալ»՝ տարածվեց սև լուրը մեծ երկրաշարժի:

Այսօր Հայաստան աշխարհը գոտեպընդված է իր հավատքի զենքերով, վերակառուցում է իր ավերված շեներն ու քաղաքները: Մեր կողքին են մարդկության բարի սրտերն ու կարեկից ձեռքերը: Ես աղոթում եմ ի խորոց սրտի.

Արի, Աստուած հարցն մերոց,
Լեր ապավէն Ազգիս Հայոց...

Խունկ և օրհնություն մեծ երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին: Եղիցի, եղիցի, ամեն»:

ՍԵՐՈՎԲԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՍԱԽԱՆՅԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՇՐՋԱՆ

Սույն թվականի դեկտեմբերի 4-ին Եղեգնաձորի Ս. Խաչ վանքում ս. պատարագ մատուցեց Սյունյաց թեմի փոխառաջնորդ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը:

«Հայր մեր»-ից առաջ հայր սուրբը բովանդակալից քարոզ խոսեց՝ բնաբան ունենալով «Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի փառք քեզ»: Հա՛ր սուրբն իր քարոզի ընթացքում վեր հանեց Հայ Եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև մեր օրերի հայրենասեր ու շինարար Վազգեն Ա Կաթողիկոսը: Նա խոսեց նաև մեր ժողովրդի այսօրվա հուզող հարցերի մասին, անդրադարձավ մանավանդ վերջին երկու տարիների մեր ժողովրդի կրած տառապանքներին, հորդորելով սեր ու միասնություն: Քարոզասացը պատմության անցած դառն փորձություններից բերեց բազմաթիվ օրինակներ, թե ինչպես ավելի վատ պայմաններում է գտնվել հայ ժողովուրդը և պայքարելով հասել մինչև այսօր: Վերջում հա՛ր սուրբը կոչ արեց ժողովրդին այսուհետև է՛լ ավելի կապված լինել Մա՛յր Աթոռ Ս. Էջմիածնին և այսօրվա արժանավոր գահակալ Կաթողիկոս Վազգեն Ա-ին:

Քարոզից հետո շարունակվեց ս. պատարագը: Պահը շատ խորհրդավոր էր. ներսում՝ ձմեռ, իսկ դրսում՝ ցրտաշունչ ձմեռ, սակայն պատարագին մասնակցող հավատացյալների հոգիները լի էին անընպատ ջերմությամբ: Երանի բոլոր մարդկանց հոգիները լցվեն ջերմությամբ, որպեսզի կարողանան աղոթել առ Աստված աշխարհի խաղաղության, մանավանդ մեր ազգի արդար իղձերի իրականացման համար, ամեն: